Կարգապահական գործ թիվ ԿԳ-23015

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՌԱԶՄԻԿ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՇԻՐՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի և Հայկ Սահակյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Ռազմիկ Շիրոյանի և նրա ներկայացուցչի՝ փաստաբան Զարուհի Փոստանջյանի,

քննության առնելով փաստաբան Ռազմիկ Արամայիսի Շիրոյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 285), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Հենրիկ Սեդրակյանը **(այսուհետ՝ նաև Դիմող)**, դիմելով ՀՀ փաստաբանների պալատ **(այսուհետ՝ Պալատ)**, հայտնել է, որ ինքը ձերբակալվել է 2023 թվականի հունվարի 11-ին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Ախուրյանի քննչական բաժնի պետի տեղակալ Մ.Մքոյանի կողմից նախաձեռնված թիվ 30100923 քրեական վարույթով:

Դիմողը հայտնել է, որ նույն օրը՝ քննիչի կողմից որպես «պետական պաշտպան» իրեն է ներկայացվել փաստաբան Ռազմիկ Շիրոյանը, ինչից հետո իրեն համոզել են համաձայնվել, որ իր շահերը պաշտպանի այդ անձը, ինչին Դիմողը համաձայնվել է, քանի որ այլ ելք չի ունեցել և գտնվել է հոգեբանական ծանր վիճակում:

Դիմողի պնդմամբ, փաստաբան Ռազմիկ Շիրոյանի խորհրդով ինքը տվել է խոստովանական ցուցմունքներ և մասնակցել է մի քանի ապացուցողական գործողությունների, որի արդյունքում ձեռք բերված ապացույցներով 2023 թվականի

հունվարի 12-ին Շիրակի մարզի դատախազության դատախազ Ա.Ավդալյանի կողմից որոշում է կայացվել իր նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին:

Դիմողը հավելել է, որ 2023 թվականի հունվարի 13-ին իր պաշտպանությունը ստանձնել է իր հարազատների կողմից հրավիրված փաստաբան Գուրգեն Հարությունյանը և ինքը հրաժարվել է Ռազմիկ Շիրոյանի ծառայությունից:

Դիմողը նաև նշել է, որ 2023 թվականի հունվարի 14-ին Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ իր նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը 2 (երկու) ամիս ժամկետով:

Դիմողի պնդմամբ, ինքը կամ իր հարազատներն իր պաշտպանությունը ստանձնելու համար փաստաբան Ռազմիկ Շիրոյանին չեն հրավիրել, և վերջինս հարուցված վարույթին ներգրավվել ու մասնակցել է քննիչի և ոստիկանության աշխատակիցների հանձնարարությամբ, ինչի պատճառով էլ նա Դիմողին բավարար իրավաբանական օգնություն ցույց չի տվել:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 04.05.2023 թվականին Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողի կողմից որևիցե ապացույց չի ներկայացվել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Ռազմիկ Շիրոյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Հենրիկ Սեդրակյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 2023 թվականի մարտի 14-ին ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ 2023 թվականի հունվարի 11-ին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Ախուրյանի քննչական բաժնի պետի տեղակալ Մ. Մքոյանի կողմից նախաձեռնված թիվ 30100923 քրեական վարույթով ներգրավվել է որպես ձերբակալված Հենրիկ Արամի Սեդրակյանի շահերի պաշտպան:

Փաստաբանը հայտնել է, որ 2023 թվականի հունվարի 11-ին գտնվել է ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության վարչական շենքի (Գյումրի քաղաքի Շիրակացի փողոց, 68/1 հասցեում) տարածքում, երբ նույն օրը ժամը 18:00-ի սահմաններում, ոստիկանների ուղեկցությամբ, ձերբակալված վիճակում նույն շենք է մուտք գործել Դիմողը, ում ինքը նախկինում ճանաչել է որպես տաքսու վարորդ, ում կողմից իրականացվող տաքսի ծառայությունից մի քանի անգամ օգտվել է: Փաստաբանի պնդմամբ, Դիմողը տեղյակ է եղել այն մասին, որ ինքը փաստաբան է, և նույն պահին բանավոր դիմել է իրեն իրավաբանական օգնություն ցուցաբերելու խնդրանքով:

Փաստաբանը հայտնել է, որ ինքը չի մերժել Դիմողի խնդրանքը, և քննիչի թույլտվությամբ մուտք է գործել վերջինիս աշխատասենյակ ու զրույց ունեցել ձերբակալված Դիմողի հետ, բացատրել է նրա իրավունքները ու պարտականությունները, ինչից հետո

Դիմողն իր ձեռքով գրել է համաձայնագիր Փաստաբանի կողմից նրան իրավաբանական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ, ինչի մասին կատարվել է նշում նաև արձանագրությունում:

Փաստաբանը հայտնել է նաև, որ մինչև Դիմողի կողմից ինքնախոստովանական ցուցմունք տալը, քննիչից պահանջել է տրամադրել Դիմողի մասնակցությամբ կազմված վարույթային գործողությունների արձանագրությունները, որոնց ծանոթանալիս ձերբակալման արձանագրության հայտարարությունների հատվածում կարդացել է Դիմողի կողմից ինքնախոստովանական հայտարարությունը, որին Փաստաբանը ներկա չի գտնվել: Նշվածի կապակցությամբ Դիմողը Փաստաբանին հայտնել է, որ ձերբակալման արձանագրության մեջ ներառված հայտարարությունը արվել է իր կողմից:

Փաստաբանը նաև նշել է, որ լսելով Դիմողին, ինքը պարզաբանել է նրան լռություն պահպանելու իրավունքը, սակայն վերջինս չի ցանկացել օգտվել իր իրավունքից և աջակցություն է ցուցաբերել ապացուցողական գործողությունների ընթացքում:

Փաստաբանը հավելել է, որ Դիմողի կինը և կնոջ եղբայրը իրեն տեղեկացրել են այն մասին, որ նրանք դիմել են փաստաբան Գուրգեն Հարությունյանին, ով ստանձնելու է Դիմողի շահերի հետագա պաշտպանությունը: Հետագայում Փաստաբանը և փաստաբան Գուրգեն Հարությունյանը ներկայացել են ՁՊՎ, որտեղ Դիմողը հրաժարվել է Փաստաբանի ծառայություններից, ինչը արձանագրվել է քննիչի կողմից:

Փաստաբանը նաև նշել է, որ Դիմողի պնդումն այն մասին, թե նա Փաստաբանի խորհրդով է տվել ինքնախոստովանական ցուցմունք և մասնակցել ապացուցողական գործողությունների, չեն համապատասխանում իրականությանը, քանի որ Դիմողը ինքնախոստովանական հայտարարությունը կատարել է ձերբակալման ընթացքում:

Փաստաբանի պնդմամբ ինքը Դիմողի շահերի պաշտպանությունը ստանձնել է նրա իսկ պահանջով և չի գործել քննիչի կամ ոստիկանության աշխատակիցների հանձնարարությամբ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 04.05.2023 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 16.05.2023թ. ներկայացված բացատրությամբ ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը՝ հավելելով, որ Դիմողին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության վարչական մասնաշենք ներկայացնելու ժամանակ ինքը՝ իր վարույթում գտնվող բազմաթիվ քրեական գործերից մեկով եղել է նշված վայրում, սակայն չի հիշում կոնկրետ որ գործով, քանի որ անցել է բավականին երկար ժամանակ:

Փաստաբանը նշել է, որ թիվ 30100923 քրեական վարույթի շրջանակներում պարզաբանել է Դիմողին ձերբակալման հիմքը, տեսակը, մեղադրյալի իրավունքներն ու պարտականությունները, դիրքորոշման փաստական և իրավական հետևանքները, որպես ձերբակալվածի՝ հարցաքննության, դեպքի վայրի զննության ընթացքում բացատրել է ապացուցողական գործողությունների կատարման կարգը և պայմանները:

Փաստաբանը հավելել է, որ ներկայացրել է արձանագրության պատճենը, որի համաձայն Դիմողն անձամբ է դիմել իրեն:

Հանձնաժողովի նիստի ընթացքում, Փաստաբանն ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը՝ հավելելով, որ Դիմողը ինքնախոստովանական ցուցմունքը տվել է մինչև Փաստաբանին դիմելը, իսկ հետագայում՝ Դիմողի շահերը պաշտպանելիս, Փաստաբանը պարզաբանել է վերջինիս իր կարգավիճակից բխող իրավունքները:

Փաստաբանի պնդմամբ, Դիմողի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, որը կհիմնավորեր իր կողմից բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չտալու հանգամանքը, իսկ փաստացի իրեն դիմելուց մինչև նոր փաստաբանի ներգրավման պահը՝ նման կարճ ժամանակահատվածում, իր կողմից չէր կարող իրականացվել որևէ գործողություն:

Փաստաբանը հավելել է նաև, որ առկա է միայն Դիմողի պնդումը այն մասին, թե Փաստաբանը ներգրավվել է նախաքննություն իրականացնող մարմնի հրավերով, սակայն բացակայում է որևէ ապացույց, որը կհիմնավորեր նշված հանգամանքը:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 20.03.2023թ. թիվ 86-Ա/ԿԳ-23015 որոշմամբ փաստաբան Ռազմիկ Շիրոյանի նկատմամբ Օրենքի **19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 2.7.2 և 3.1.9 ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

23.03.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 23.05.2023թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված չի համարվել Փաստաբանի կողմից Դիմողի իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ գործողություններ կատարելու հանգամանքը, ինչպես նաև եզրակացությամբ նշվել է, որ Փաստաբանը պարտավոր է ապացուցել այն հանգամանքը, որ Դիմողն անձամբ է իրեն դիմել, իսկ վարույթն իրականացնող մարմնի վարչական տարածքում մեկ այլ գործով գտնվելու վերաբերյալ որևիցե ապացույց Փաստաբանը չի ներկայացրել:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 23.05.2023թ.:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել 22.06.2023թ. ժամը 18:30-ին և 13.07.2023թ. ժամը 20:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, Փաստաբանի կողմից ներկայացված 11.01.2023թ. համաձայնագրով, ինչպես նաև մեղադրյալի իրավունքները բացատրելու մասին 11.01.2023թ. արձանագրությամբ:*

2. Դիմողը տվել է ինքնախոստովանական ցուցմունք մինչև Փաստաբանի կողմից նրա իրավունքների ու շահերի պաշտպանությունը ստանձնելը: *Նշված փաստը հաստատվում է Փաստաբանի բացատրությամբ, ինչպես նաև 11.01.2023թ. ժամը 13:35-ին կազմված և Դիմողի ստորագրած ձերբակալման մասին արձանագրությամբ:*

3. Դիմողը հրաժարվել է Փաստաբանից 13.01.2023թ., երբ իր գործով ներգրավվել է մեկ այլ փաստաբան: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով:*

4. 2023 թվականի հունվարի 11-ին Փաստաբանը գտնվել է ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային վարչության վարչական տարածքում: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Ռազմիկ Շիրոյանը փաստաբան է հանդիսանում 07.11.1996-ից և 2018-2023թթ. ընկած ժամանակահատվածում փաստաբանը չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Ռազմիկ Արամայիսի Շիրոյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի և Կանոնագրքի 2.7.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշների մասով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման: Միաժամանակ, Ռազմիկ Արամայիսի Շիրոյանի նկատմամբ անհրաժեշտ է կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն «առկա» եղանակով, Դեոնթոլոգիա թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.1.9 ենթակետի պահանջների խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

7.1 Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի խախտման մասով.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը*

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ...* :

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք.*

Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են որոշակի պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է

փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում ոչ միայն փաստաբանի կողմից որոշակի վարքագծի դրսևորման հանգամանքը, այլ նաև դրսևորվող վարքագծում Օրենքով և/կամ Կանոնագրքով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների առկայության հանգամանքը, որի պայմաններում միայն Հանձնաժողովը կարող է քննարկել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից նաև հետևում է, որ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է հանգամանքների այնպիսի համակցություն, որոնք ոչ միայն արտաքուստ, առանց դրանց ըստ էության քննության, ողջամիտ կասկած են հարուցում փաստաբանի կողմից Օրենքի և (կամ) Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների հնարավոր խախտման վերաբերյալ, այլ նաև ապացուցում են դրանց առկայությունը: Ընդ որում, ***այն դեպքում, երբ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն առերևույթ բացակայում են, ապա փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթը ենթակա է կարճման***:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի և/կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Սույն կարգապահական գործի շրջանակներում, Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Դիմողի կողմից ինքնախոստովանական ցուցմունքը տրվել է 11.01.2023թ. ժամը 13:35-ին կազմված ձերբակալման մասին արձանագրության շրջանակներում՝ այսինքն այն ժամանակ, երբ Փաստաբանը դեռ չէր ստանձնել Դիմողի իրավունքների և շահերի պաշտպանությունը, իսկ հետագայում՝ պաշտպանությունը ստանձնելուց հետո, Փաստաբանն ըստ էության մասնակցել է որոշակի գործողություններին 11.01.2023թ., ինչից հետո Դիմողն իր հերթին հրաժարվել է նրա ծառայություններից 13.01.2023թ.: Հանձնաժողովը հաստատված է համարում, որ Դիմողն ինքնախոստովանական տվյալներ է հաղորդել նախքան քրեական վարույթին Փաստաբանի ներգրավվելը, ինչը նշանակում է, որ ինքնախոստովանական տվյալները չեն հաղորդվել Փաստաբանի խորհրդով կամ առաջարկով:

Այս համատեքստում, Հանձնաժողովն ընդգծում է, որ, իրականացնելով Դիմողի շահերի պաշտպանությունը փաստացի միայն 2 օր և ենթադրաբար ունենալով նաև այլ վստահորդներ, Փաստաբանն օբյեկտիվորեն կարող էր ձեռնարկել միայն խիստ սահմանափակ թվով գործողություններ՝ այդ թվում մասնակցել նշված ժամանակահատվածում կազմակերպված քրեադատավարական գործողություններին, ինչն էլ փաստացի կատարվել է վերջինիս կողմից: Մասնավորապես, նշվածի մասին են վկայում Փաստաբանի մասնակցությամբ/ներկայությամբ (11.01.2023թ. որոշումը՝ անձին ձերբակալելու մասին, 11.01.2023թ. մեղադրյալի իրավունքները բացատրելու մասին

արձանագրությունը, 11.01.2023թ. ձերբակալվածի հարցաքննության մասին արձանագրությունը) կազմված փաստաթղթերը:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովն արձանագրում է, որ Դիմողի կողմից որոշակիորեն չի հիմնավորվել, թե կոնկրետ ինչ գործողություն պետք է իրականացներ Փաստաբանը, որը չի իրականացրել, չի նշել ու հիմնավորել, թե կոնկրետ որ գործողություններում է թերացել Փաստաբանը, իսկ գործում առկա ապացույցներն իրենց համակցությամբ բավարար չեն Փաստաբանի վարքագծին այդ մասով բացասական գնահատական տալու համար:

Նշվածը հաշվի առնելով, ինչպես նաև գործում առկա ապացույցները իրենց համակցությամբ գնահատելով՝ Հանձնաժողովն արձանագրվում է, որ Փաստաբանին վերագրվող Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մետի և Կանոնագրքի 2.7.2 ենթակետի պահանջի խախտման մասով բացակայում են դրա առերևույթ հատկանիշները, որպիսի պայմաններում էլ այդ մասով հիմնավորված չէ Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

7.2. Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.1.9-րդ ենթակետի խախտման մասով.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 3.1.9-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը չի կարող ընդունել նախաքննության և դատաքննության փուլերում տվյալ գործով վարույթ իրականացնող պաշտոնատար անձի կողմից իրեն ուղղված՝ տվյալ վարույթին առնչվող անձի գործի վարման հետ կապված իրավական օգնություն ցույց տալու առաջարկ:* ***Եթե փաստաբանը չկարողանա ապացուցել, որ քրեական գործով պաշտպանության համար իրեն է դիմել վստահորդը կամ նրա հանձնարարությամբ այլ մասնավոր անձ, ապա Պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է հաստատված համարել այն փաստը, որ փաստաբանը քրեական գործով վարույթում է հայտնվել նախաքննության մարմնի առաջարկով:*** *Պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է հաշվի առնել նաև փաստաբանի կողմից իրականացրած գործողությունների բնույթը՝ վստահորդի շահերը պատշաճ կարգով ներկայացված լինելու տեսանկյունից:* ***Փաստաբանի կողմից նախաքննության մարմնի պաշտոնատար անձի հանձնարարությամբ (առաջարկությամբ) գործին ներգրավված լինելու և վստահորդին բավարար իրավական օգնություն ցույց տված չլինելու արարքների համակցությունը հանդիսանում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:***

Վկայակոչված նորմերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումից և իր պարտականությունների բարեխիղճ կատարումից բացի փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից է հանդիսանում նաև անկախության սկզբունքը, որի բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը՝ իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս, պետք է ոչ միայն ելնի վստահորդի նպաստավոր շահերից, բարեխղճորեն և ժամանակին պաշտպանի վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը, այլ նաև իր

գործունեությունն իրականացնելիս՝ նաև անկախ լինի, այսինքն՝ ազատ լինի ազդեցություններից և, հատկապես, այնպիսի ազդեցություններից, որոնք կարող են ծագել փաստաբանի անձնական հետաքրքրություններից կամ արտաքին ճնշումից և, որը կարող է բացասաբար ազդել վստահորդի գործի վրա: Ավելին, Փաստաբանը պետք է խուսափի իր անկախության թուլացումից և ուշադիր լինի իր մասնագիտական չափորոշիչների հանդեպ, որպեսզի նրանք չհարմարեցնի դատարանին կամ երրորդ անձանց գոհացնելու համար:

Այս համատեքստում, առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի կողմից նախաքննության և դատաքննության փուլերում տվյալ գործով վարույթ իրականացնող պաշտոնատար անձի կողմից իրեն ուղղված՝ տվյալ վարույթին առնչվող անձի գործի վարման հետ կապված իրավական օգնություն ցույց տալու առաջարկ չընդունելու սահմանափակումը, որի պահպանումը սերտորեն կապված է անկախության սկզբունքի պահպանման հետ:

Բացի այդ, հաշվի առնելով այդպիսի վարքագծի վտանգավորությունը Կանոնագրքի շրջանակներում այն կարող է դիտարկվել նաև որպես ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում, որի համար անհրաժեշտ է երկու վավերապայմանների (արարքների) միաժամանակյա առկայությունը (համակցությունը)՝ այն է.

- Փաստաբանի կողմից վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձի հանձնարարությամբ (առաջարկությամբ) գործին ներգրավված լինելը և
- վստահորդին բավարար իրավական օգնություն ցույց չտալը:

Բացի այդ, նշված տրամաբանության հաշվառմամբ Կանոնագրքի հիշյալ դրույթի բովանդակությամբ փաստացի նախատեսվել է նաև ապացուցման առանձնահատուկ պարտականություն, որը կրում է հենց Փաստաբանը, և, որի չկատարումը հանգեցնում է Փաստաբանի՝ նախաքննության մարմնի առաջարկով քրեական վարույթում հայտնվելու փաստի հաստատմանը՝ «կանխավարկածի ուժով»:

Սույն կարգապահական գործի շրջանակներում, Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Փաստաբանի կողմից վկայակոչված Դիմողի 11.01.2023թ. համաձայնությունը (իրավունքների պաշտպանությունը Փաստաբանի կողմից իրականացնելու մասին) ինքնին չի կարող վկայել նախաքննության մարմնի առաջարկով (հանձնարարությամբ, հրավերով) քրեական վարույթում Փաստաբանի ներգրավված չլինելու մասին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության վարչական տարածք Դիմողի ներկայանալու պահին Փաստաբանն արդեն իսկ եղել է այդ տարածքում:

Բացի այդ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել նաև այն հանգամանքը, որ չնայած Փաստաբանի պնդմամբ՝ ինքը գտնվել է նախաքննության մարմնի վարչական տարածքում իր վարույթում գտնվող մեկ այլ գործով, այնուամենայնիվ, վերջինս չի մանրամասնել և չի ներկայացրել որոշակի տեղեկություններ կամ հիմնավորումներ այդ գործի վերաբերյալ, ինչը ողջամտորեն թույլ կտար Հանձնաժողովին ենթադրել, որ Փաստաբանն ըստ էության չէր ժամանել նախաքննության մարմնի առաջարկով (հրավերով, հանձնարարությամբ)՝ Դիմողի վերաբերյալ քրեական վարույթում ներգրավելու համար:

Նման պայմաններում, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փաստաբանի կողմից փաստացի չի ներկայացվել որևէ ապացույց, որը կհիմնավորեր

քրեական վարույթում Դիմողի պաշտպանության համար իրեն վստահորդի կամ նրա հանձնարարությամբ այլ մասնավոր անձի դիմելու փաստը՝ Հանձնաժողովը «կանխավարկածի ուժով», ինչպես նաև իր կողմից ապացուցման ենթակա փաստը Փաստաբանի կողմից չապացուցվելու պայմաններում դրա բացասական հետևանքները Փաստաբանին վերագրելու կանոնը կիրառելով հաստատված է համարում, որ Փաստաբանը Դիմողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը ստանձնել է քրեական վարույթն իրականացնող մարմնի հրավերով/առաջարկով/հանձնարարությամբ, ինչից ելնելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են Կանոնագրքի 3.1.9 ենթակետի պահանջների խախտման հատկանիշները:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը հաստատված չի համարում վերը բանաձևված երկու պայմաններից երկրորդի՝ վստահորդին բավարար իրավական օգնություն ցույց չտալու պայմանի առկայությունը, ինչով պայմանավորված՝ Փաստաբանի կողմից Կանոնագրքի 3.1.9 ենթակետի պահանջների խախտումը Հանձնաժողովը չի որակում որպես ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում, ինչը հաշվի է առնվում կարգապահական տույժի տեսակն ընտրելիս:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը՝ մասնավորապես այն, որ խախտումն իր բնույթով էապես խաթարում է փաստաբանության հեղինակությունն ու փաստաբանի հանդեպ հանրային վստահությունը, ավելին՝ Փաստաբանի թույլ տված խախտումն իր բնույթով համատեղելի չէ փաստաբանի կոչման ու

առաքելության հետ: Հանձնաժողովը հաշվի է առնում նաև մեղքի աստիճանը՝ գտնելով, որ խախտման բնույթն իր բնույթով բացառում է Փաստաբանի կողմից այն չգիտակցելը:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը հաշվի է առնում նաև Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները՝ մասնավորապես չմարված և/կամ չհանված կարգապահական տույժերի բացակայությունը, ինչպես նաև փաստաբանական ստաժի մեծությունը, ինչից ելնելով Փաստաբանի նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ կիրառում է «խիստ նկատողություն», իսկ որպես լրացուցիչ կարգապահական տույժ՝ «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել»՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, 4 ակադեմիական ժամ տևողությամբ՝ Փաստաբանի հաշվին:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 7-րդ և 8-րդ մասերի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Ռազմիկ Արամայիսի Շիրոյանի (արտոնագիր՝ թիվ 285) նկատմամբ կիրառել հիմնական կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն» և լրացուցիչ կարգապահական տույժ՝ «իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն»՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.1.9 ենթակետի խախտման համար:

2. Փաստաբան Ռազմիկ Արամայիսի Շիրոյանի (արտոնագիր՝ թիվ 285) նկատմամբ հարուցված թիվ ԿԳ-23015 կարգապահական վարույթն Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշների մասով՝ կարճել:

3. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-23015-2-Ա
13 հուլիսի 2023թ.
ք.Երևան